



## ԱՊՐԵՑԻՆՔ

### ՄԵԿ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎԱ...

*Ոչխարների բանակը, որ ղեկավարում է առյուծը, միշտ էլ հաղթում է առյուծների բանակին, որ ղեկավարում է ոչխարը:*

**Նապոլեոն Բոնապարտ**

**Հիմնաբառեր.** պեղություն, ազգ, քաղաքականություն, պատերազմ, խաղաղություն, հոգևոր-բարոյական աղետ

### Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է «Փիլիսոփայության և հայոց պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 30 գիտական հոդվածների:

Պատերազմը սոցիական աղետ է, դժբախտությունների և փառապանքի պատճառ: Սակայն, պատերազմը նաև սոցիալական իրողություն է, որից գրեթե հնարավոր չէ խուսափելը, որովհետև այն պայմանավորված է փարբեր հանգամանքներով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն: Պատերազմը քաղաքականության գործիքն է, դրա շարունակությունը այլ միջոցներով: Պատերազմը հատկապես աղետալի է պարտվող կողմի համար, որովհետև քաղաքական, սոցիալական և տնտեսական ցնցումներից բացի, այն կարող է ունենալ նաև հոգևոր-բարոյական կործանարար ազդեցություն, որովհետև մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են փառապել հոգեկան ետընթացով, հոգեպես խիստ ուժասպառելով, ամեն ինչ կորած են համարում և լքում են իրենց պատմական առաքելությունը, համակերպվում իրենց վզին փաթաթված քաղաքական ճակատագրին, դառնում են քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից անսպեղծագործ, զզվելի անձնապաշտ, փոքրոգի ու խորթ հասարակությանը և սկսում հեղափոխել սոսկ մեկ առօրեական նպատակ՝ իրենց սեփական հացն ու հանգիստը...

Հեղինակը համոզված է, որ վաղ թե ուշ քրտնաջան աշխատանքի և բարեկամ երկրների ու ժողովուրդների աջակցությամբ, կկարողանանք կարգավորել տնտեսությունը, քաղաքական հարաբերությունները, կյանքը կվերադառնա իր բնականոն ընթացքին..., սակայն, դժվարը հայ մարդու ապրած հոգևոր-բարոյական աղետի հետևանքների հաղթահարումն է...

*Մենք պարտավոր ենք դա անել, պարտավոր ենք հաղթահարել ինքներս մեզ և «երբեք, երբեք չհանձնվենք»...*

Ապրեցինք մեկ պատերազմ ևս, բայց ոչ վերջինը... Կ. Պոպերը Հեգելին մեղադրում էր «ժամանակակից ֆաշիզմի» գաղափարները քաջարելելու մեջ՝ հիմք ընդունելով պետության և ազգի մասին նրա ըմբռնումները: Հեգելի կարծիքով, ոչ բոլոր ազգերը կարող են պետություն ստեղծել, հետևաբար՝ ա) միայն բարձրագույն ռասան է ընդունակ պետություն ստեղծելու, բ) պետությունը կարող է գոյություն ունենալ՝ միայն իրեն հակադրելով ուրիշ պետությունների: Այսինքն, ըստ Հեգելի, այնտեղ, որտեղ կա պետություն, կա նաև սահման, իսկ այնտեղ, որտեղ կա սահման, կան նաև բաժանում և թշնամանք: Որպեսզի պետությունները կարողանան պաշտպանել իրենց սահմանները, նույնն է՝ թե իրենց պետականությունն ու անկախությունը, իրենց հարաբերությունները պետք է պարզեն պատերազմների միջոցով: Իզուր չէ, որ Գ. Ֆոն Տրայտցկեն համոզված պնդում էր. «Պատերազմը ոչ միայն գործնական, այլև տեսական անհրաժեշտություն է, տրամաբանության պահանջ: Պետության հասկացությունն ինքնին ենթադրում է պատերազմի հասկացության առկայություն, քանի որ պետության էությունն իշխանությունն է»<sup>1</sup>:

Պատմագրության մեջ ամրագրված է, որ մ.թ.ա. 3600 թ.-ից մինչև մ.թ. 1980 թ. (այսինքն՝ մոտավորապես 5600 տարի) տեղի են ունեցել մոտավորապես 14550 մեծ և փոքր պատերազմներ, որոնց ընթացքում զոհվել կամ սովից ու համաճարակներից մահացել է 3,6 մլրդ մարդ<sup>2</sup> (սա, անկասկած, մոտավոր թիվ է): Իսկ եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ մահացողները բացառապես երիտասարդներն էին, քանի որ. «Ծերունիները հայտարարում են պատերազմ, իսկ երիտասարդները գնում են մեռնելու» (Հերբերտ Հուվեր, ԱՄՆ 31-րդ նախագահ), երևույթի ողբերգականու-

թյունն ավելի ամբողջական և անընդունելի կդառնա՝ անկախ հետապնդվող նպատակների ազնվությունից, բնութագրումներից, ակնկալվող արդյունքներից, իրական ելքից: Ինչպես Թոմաս Մանն է գեղեցիկ ձևով բնութագրում, պատերազմը վախկոտ փախուստ է խաղաղ ժամանակների հիմնախնդիրներից:

Որոշ մտածողներ պատերազմը բնորոշում են որպես բնական անհրաժեշտություն, պայքար ու կռիվ: Այդ կարծիքին էր նաև հույն փիլիսոփա Հերակլիտեսը՝ պատերազմը համարելով ամեն ինչի հայրը. «Պատերազմը հայրն է ամեն ինչի և ամեն ինչի թագավորը: Նա մեկին աստված է դարձրել, մյուսին՝ մարդ, մեկին՝ ստրուկ, իսկ մյուսին՝ ազատ: Պետք է իմանալ, որ պատերազմը համընդհանուր է և արդարությունը՝ պայքար, և որ ամեն ինչ առաջանում է պայքարի միջոցով և անհրաժեշտաբար»<sup>3</sup>: Համանման տեսակետներ էին շրջանառում նաև հայ քաղաքական մտքի որոշ ներկայացուցիչներ: Առաջին հայկական կուսակցության հիմնադիր Մկրտիչ Փորթուգալյանը (1848-1921) համոզված էր, որ «ով կապրի կամ կուզե ապրիլ, պիտի կռուի: Կեանքը կռիւ մ'է արդէն. գոյութեան կռիւր մարդ ծնած օրէն կը սկսի և մինչեւ մահը կը շարունակէ: Կռուելէ դադրիլը մեռիլ է»<sup>4</sup>:

Պատերազմի ամենահայտնի սահմանումներից մեկը համարվում է պրուսական բանակի գեներալ, ռազմարվեստի տեսաբան և պատմաբան Կարլ Կլաուզկիցի «բանաձևը». «Պատերազմը քաղաքականության գործիքն է, դրա շարունակությունը բռնի (այլ) միջոցներով: Իսկ գլխավոր բնութագծերով պատերազմը հենց քաղաքականությունն է՝ «գրիչը փոխարինելով սրով», որի նպատակն է ստիպել հակառակորդին կատարել մեր կամքը»<sup>5</sup>: Գարեգին Նժդեհին էլ, իր հերթին, համոզիչ կերպով պնդում էր. «Պատերազմներն են օրորել մարդկութեան մանկութիւնը եւ ո՛չ խաղաղութիւնը, որը ոչ թէ բնական վիճակ է եղել, այլ՝ պատերազմների միջև կարճատե-

<sup>1</sup> К.Поппер, Открытое общество и его враги, т. 2, с. 79.  
<sup>2</sup> Философский энциклопедический словарь, с. 88.  
<sup>3</sup> Дынник М.А., Диалектика Гераклита, М., 1929, с. 131-132:  
<sup>4</sup> «Արմենիա», 1908, էջ 275:

դադար միայն: Պատերազմ է անվերջ, եւ եթէ երբեմն ժողովուրդները կռվադաշտում չեն, ապա նրանք զորանոցներում են, ուր խելայեղօրէն պատրաստում են նորանոր բախումների համար»<sup>6</sup>: Իսկ Ալեքսանդր Սուվորովն ասում էր, թե պատերազմն ավարտվում է միայն այն ժամանակ, երբ հուղարկավորվում է վերջին զինվորը:

XVIII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Պիտտոն դը Տուրնեֆորը հայերի մասին գրում է. «Հայերը աշխարհիս լաւագոյն մարդիկ են, ազնիւ, քաղաքաւարի եւ չափազանց ողջամիտ: Ես նրանց երջանիկ կը համարեի զենքի անվարժ լինելու համար, եթէ անհրաժեշտ չլիներ երբեմնապէս զենք գործածել. որովհետեւ դա միակ միջոցն է խուսափելու մարդկանց անգթութիւնից»<sup>7</sup>: Սակայն, եթե անգամ ընդունում ենք, որ հայերն աշխարհիս լավագոյն մարդիկ են, Դարվինի «բնաշրջման» (էվոլյուցիոն) օրենքը ցոյց է տալիս, որ ոչ թե «ամենալաւը, այլ ամենայարմարն է որ կ'ապրի», և «կը ցափնք ըսելու, որ Հայը «ամենալաւը» եղած է, սակայն տիրող միջավայրին համար «ամենայարմարը» եղած չէ»: «Մեր դրկիցները բարբարոս ու հովվական, իսկ մենք՝ հաստատված եւ քաղաքակիրթ, մեր հարեւանները ռազմատենչ, իսկ մենք խաղաղ ու ինքնապաշտպան: Նրանք հեթանոս խավարի մէջ խարխափող, իսկ մենք՝ քրիստոնեական վսեմ գաղափարներով թոյլք ապրող: Միուս ցեղերը երկիրը կ'ապրէին, իսկ մենք՝ երկինքը: Անոնք ցեղն ու ազգը կը քարոզէին, իսկ մենք՝ մարդկութիւնը: Անոնք ցեղային ռազմական Աստուծոյն կը հաւատային, իսկ մենք՝ Տիեզերական ու Սիրոյ Աստուծոյն. անոնք աչքի տեղ աչք կը հատուցանէին, իսկ մենք՝ մեզ կողոպտողին մեր վերարկուն ալ կը ձգէինք: Անոնք Մովսիսական օրէնքն ու Հին Ուխտը կը կիրարկէին, իսկ մենք՝ Քրիստոնէական ու Սիրոյ Ավետարանը: Անոնք կ'ապտակէին, իսկ մենք՝ կ'աղօթէինք»<sup>8</sup>, - գրում է ամերիկահայ փիլիսոփա և հոգեբան Հակոբ Պողոսյանը: Եվ դա հիմնականում այն պատճառով, որ մենք՝ ազգովի,

ծիշտ չենք հասկացել «Աստվածաշունչը»՝ հետևելով միայն Նոր կտակարանին և անտեսելով Հին կտակարանի «ուժապաշտ» պատվիրանները, չգիտակցելով այն հանգամանքը, որ Հիսուսի պատվիրանները կատարելու համար անհրաժեշտ է լինել Հիսուսի չափ հզոր... Մենք համառորեն ինչպես ուրիշներին, այնպես էլ մեզ ցանկացել ենք ապացուցել, որ միայն ժանիքավորներն ու գիշատիչները չեն, որ կոչված են հավերժելու, որ կարող են հավերժել նաև այն ժողովուրդները, որոնք հրաժարվել են պատերազմների վայրի բնագոյներից: Մենք անտեսել ենք այն ճշմարտությունը, որ խաղաղապաշտ և անարի ժողովուրդները տկարանում են, դառնալով որսը նրանց, ովքեր դավանում են պատերազմի աստծուն, որոնց ուժն աճում և ծավալվում է անդիմադրելիորեն... Եվ հենվելով մեր պատմության, մեր մտածողության, մեր կենսակերպի և օտար ճանապարհորդների վկայությունների վրա՝ մի առանձնակի գոհունակությամբ և բավարարվածությամբ ենք ընդգծում, որ մեր բոլոր պատերազմները եղել են միայն ու միայն «պաշտպանողական» բնույթի, դրա տակ ավելի շատ հասկանալով միայն բառի լեզվաբանական, այլ ոչ փիլիսոփայական իմաստը, քանի որ, փիլիսոփայության տեսանկյունից, պատերազմները չեն կարող լինել «պաշտպանողական» կամ «արդարացի»: Անդրադառնալով պատերազմների բնույթին՝ Գ. Նժդեհը հարցնում է՝ ինչ է արդարացի կամ անարդարացի պատերազմը, ով է որոշում դա, կան, արդյոք որոշակի չափորոշիչներ նման տարանջատման համար, երբ մեկը հարձակվում է, իսկ մյուսը՝ պաշտպանվում, և ով է այդ երկուսից մեղավորը և ով՝ անմեղը. «Եւ ոչ մէկը, իրաւունք ունեն երկուսն էլ, պատերազմն արդար է երկուսի համար էլ, - ասում է ֆրանսիացին: - Ես սիրում եմ թղթախաղում տանողին, ինչպէս եւ կուում յաղթողին, - ասում է անգլիացին: - Եթէ մեզ համար օգտակար է, ուրեմն և կարելի է, - ասում է գերմանացին: - Կամ

<sup>5</sup> Կ. Ֆ. Գ. Կլաուզկիցի բանաձևը քաղաքականության և պատերազմի վերաբերյալ, <http://agoraarmenia.blogspot.com/2012/06/blog-post.html>

<sup>6</sup> Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 32:

<sup>7</sup> Ըստ Մ. Վարանդեանի, Հայկական շարժման նախապատմությունը, էջ 140:

<sup>8</sup> Հակոբ Պողոսեան, Ներածություն հայ հոգեբանության, Գահիրե, 1958, էջ 127:

բոլորի բարեկամը, կամ բոլորի թշնամին,-  
ասում է ամերիկացին: Եւ որովհետեւ հնա-  
րաւոր չէ բոլորի բարեկամը լինել, նա գործ-  
նականում մնում է բոլորի թշնամին»<sup>9</sup>: Այդպես են մտածում ուրիշները, մինչդեռ  
մենք անուղղելի ենք նաև պատերազմի  
և խաղաղության մեր ըմբռնումներում... Անտեսելով բնական օրենքները, որպես  
պաշտպանվող և խաղաղապաշտ ազգ, մեր  
կենսաձևին համապատասխան՝ ձևավորել  
ենք նաև նույնպիսի գաղափարախոսու-  
թյան, կրթության, դաստիարակության  
որակներ, գերագույն խնդիր դարձնելով  
մեր տան, մեր կենսատարածքի պաշտպա-  
նությունը, առանց մտահոգվելու, որ նման  
գաղափարախոսությունն ու քաղաքակա-  
նությունը, ի վերջո, մեր տունն է դարձնում  
հայրենիք և մեր տան սահմանները՝ հայ-  
րենիքի սահմաններ, փոխարենը՝ մեր հայ-  
րենիքը մեր տունը դարձնելու, իսկ մեր  
հայրենիքի սահմանները՝ մեր տան սահ-  
մաններ: Եվ այս տեսանկյունից, երիցս  
իրավացի է Գ. Նժդեհը, երբ ասում է.  
«Կ'ողբամ հայրենասիրութիւնը այն ընտա-  
նիքների, որոնք հոգեւոր Հայրենիքի ման-  
րանկարը չեն»<sup>10</sup>:

Այս վերաբերմունքը նոր չէ հայկական  
գիտակցության և մշակույթի մեջ: XIX  
դարի «Մեծագույն Հայ» տիտղոսին ար-  
ժանացած Ղևոնդ Ալիշանը, խոսելով Ար-  
տաշես Պարթևի նվաճումների մասին, ոչ  
միայն չի փառաբանում այդ հզոր աշխար-  
հակալին, այլև պարսավում է նրան, ում  
«հպարտ և փառասեր» սրտին Հայաստանի  
ընդարձակ սահմանները շատ նեղ էին  
թվացել, և նա, տիրելով պարսիկներին  
Արևելքում, ցանկացել էր տիրել նաև Հու-  
նաստանն Արևմուտքում, իսկ երբ «կարգը  
Հռովմա եկավ», բախտը չժպտաց, որով-  
հետև «հայ ազգը հանիրավի օտարի ար-  
յուն թափելու համար եղած չէ: Զգվեցավ  
այն անգութ փառքեն, զգվեցավ օտար  
հողէ, հիշեց իր հայրենի հողն և ջուրն և  
տեսնելով, որ բռնավորի մը ձեռք ուրիշի  
բռնավոր ըլլալու գործիք մը եղած է, քաշեց  
բարկութեան ատեն սուրը իր թագավորին

դեմ, և իջավ հարվածը Արտաշիսի սրտին,  
երբոր անիկա Աթենքի հրաշակերտ տա-  
ճարաց մեջ կպտտցներ հաղթող աշվնե-  
րը»<sup>11</sup>: Ալիշանը չի փառաբանում իր հզոր  
և աշխարհակալ թագավորին, քանի որ  
հային օտար է աշխարհակալության զգա-  
ցումը: Անդրադառնալով այդ խնդրին՝ մեր  
փիլիսոփայական մշակույթի երախտա-  
վորներից Մկրտիչ Սմբատ Գաբրիելյանը  
գրում է. «Մեր ցեղին կպակսեր աշխար-  
հակալութեան եռանդն ու խիզախ ոգին,  
որ յանդուգն քայլեր առնելու կը մղեր ժո-  
ղովուրդ մը»<sup>12</sup>: Նրա կարծիքով, նման կեն-  
սաձևը պայմանավորված էր Հայկական  
բարձրավանդակի առանձնահատկությու-  
ներով. «Հայաստանի լեռնային հանգա-  
մանքը թեպետ ինքնապաշտպանութեան  
յարմար, բայց միացեալ ուժերով յարձա-  
կողական գործունեութեանց և աշխարհա-  
կալական ձեռնարկներու նպաստաւոր  
չէր»: Այս հանգամանքն օգտագործելով՝  
յուրաքանչյուր նախարարություն «գրաւած  
էր գաւառ մը և կը նկատեր զայն իր պգ-  
տիկ տերութիւնը, ու չէր ուզեր այդ նեղ  
սահմանէն անդին իր ցեղակիցներով գոր-  
ծակցիլ ազգային նպատակի մը համար»<sup>13</sup>...

Այս տեսակետը զարգացնում է նաև  
Զարլզ Էլիոտն իր «Ժամանակակից Թուրքի-  
ան» աշխատության մեջ, որտեղ, անդրա-  
դառնալով հայերին, գրում է. «Անոնք ցեղ  
մըն են, որ խիստ քիչ յարմարութիւն և կամ  
հանճար ունին պետութիւն կառուցելու  
մէջ: Այս կիրքին պակասը թրքական յաղ-  
թութիւններուն վերագրելի չեն, ինչու որ  
անկէ շատ առաջ ալ հայերը ապացուցեցին  
թէ պետութիւն մը չեն կրնար պահել:  
Անոնք մշտական անմիաբանութիւններով  
բաժանուած լինելով՝ ստրուկները դարձան  
յաջորդաբար Պարթեւներուն, Հռոմեացի-  
ներուն, Պարսիկներուն և Յոյներուն: Ասի-  
կա մասսամբ արդիւնք է իրենց երկրին  
աշխարհագրական դիրքին: Բայց վերջա-  
պէս այդ դիրքին համար ալ իրենք են  
պատասխանատուն»: Այո, հայերը ժամա-  
նակին կարող էին գրավել ինչպես Կ. Պո-  
լիսը, այնպես էլ Կովկասյան լեռնաշղթան:

<sup>9</sup> Գ. Նժդեհ, Էջեր իմ օրագրեն// Հատընտիր, էջ 32-33 :

<sup>10</sup> Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 122:

<sup>11</sup> Ղ. Ալիշան, Երկեր, էջ 215-216:

<sup>12</sup> Մ. Ս. Գաբրիելյան, Հայ ցեղը, Նիւ-Ետրք, 1911, էջ 8-10:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 10:

«Ազգ մը, որ այդ երկու անառիկ ամրոցներուն կը տիրանար՝ անպայման հզոր ազգ մը լինելու էր»<sup>14</sup>, - ասում է Էլիոտը:

Մինչդեռ հայերը չգրավեցին ո՛չ Կոլիսը և ո՛չ էլ Կովկասյան լեռնաշղթան, ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր ոչ միայն կամ ոչ այնքան հայրենի երկրի հանդեպ ունեցած խորհրդապաշտական (միստիկ) սիրով ու վերաբերմունքով, որքան աշխարհաքաղաքական փիլիսոփայության չհամացությամբ: Անկասկած, ճշմարիտ է այն միտքը, որ պատմությունը «եթե»-ներով չի կառուցվում, բայց և ճշմարիտ է այն, որ «Կոլիսոյ իշխողը ամբողջ տիեզերքին ճշմարիտ իշխանն է»: Համենայն դեպս, այդ կարծիքին էր ոչ միայն Պետրոս Առաջինը<sup>15</sup>, այլև Նապոլեոն Բոնապարտը. «Ես կարող էի բաժանել թիրք կայսրութիւնը Ռուսաստանի հետ. այդ մասին մի քանի անգամ խոսք է եղել մեր մէջ, և Պոլիսը միշտ փրկել է Թիւրքին... Դա չափազանց արժէքատու մի բանալի է. Պոլիսը ինքնին արժէ մի ամբողջ կայսրութիւն. ով որ տիրե նրան, կը կառավարէ ողջ աշխարհը»<sup>16</sup>:

Անկախ պատերազմի հանդեպ մեր ունեցած վերաբերմունքից, այն գոյություն ունի որպես սոցիալական իրողություն, որից գրեթե հնարավոր չէ խուսափել՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն: Հետևաբար՝ անհրաժեշտ է իրատեսորեն նայել պատերազմի և խաղաղության փոխհարաբերության խնդրին: «Մեր ժողովուրդը ոչ միայն պատերազմի եւ խաղաղութան մասին սխալ ըմբռնում ունի, այլեւ անուղղայ է իր անփութութեան մէջ՝ դէպ սեփական գոյութիւնը, զուրկ խրատելու եւ հրահանգելու ընդունակութիւնից, անկարող ըմբռնելու մի տարրական ճշմարտութիւն, թէ խաղաղապաշտ եւ անարի ժողովուրդները պատերազմից անհամեմատօրէն անելի են տուժում»<sup>17</sup>, - գրում է Գ. Նժդեհը: Դա չի նշանակում, որ չենք ընդունում խա-

ղաղության անհրաժեշտությունը: Դա նշանակում է, որ խաղաղության ամենակարճ և միակ ճանապարհը պատերազմին պատրաստ լինելն է: Խաղաղապաշտ և անարի ժողովուրդները տկարանում են և դառնում որսը նրանց, որոնց ուժն աճում է և ծավալվում անդիմադրելիորեն: Հայը, որն իր պատմության ընթացքում նշանավորվել է իր քաջագործություններով և արիությամբ և դեռևս Հռոմի բանաստեղծների կողմից «այլաբանվել» որպես «վագրային» և «կամուրջներ չհանդուրժող», որի «զինուորական բարոյականը յենում էր «սրբութեան ուխտի» վրայ, դեռ Ե դարից առաջ էլ պատգամում էր. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր»<sup>18</sup>:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո պատերազմի և խաղաղության հանդեպ մեր ըմբռնումներն արմատապես փոխվեցին, թեև ինչպես Աստվածաշնչում, այնպես էլ նորկտակարանային մյուս գրքերում անպատասխանատու խաղաղասիրության՝ պացիֆիզմի դրսևորում չկա: Պատերազմն ընդունվում է որպես կյանքի բնական երևույթ և երկրային կյանքի մեղք. «Սակայն երբ լսէք պատերազմների մասին կամ պատերազմների լուրեր, տազնապահար չլինէք, որովհետեւ այդ պէտք է լինի, բայց դեռ վախճանը չէ: Ազգ ազգի դէմ պիտի ելնի եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ» (Մարկոսի ավետարան, 13:7-8):

Ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Ասատրյանը, «իբրեւ աշխարհային ցափ փիլիսոփայութիւն՝ քրիստոնէական վարդապետութիւնը պատշաճում էր հայկական տառապապաշտ ոգուն, որով՝ նոր կրօնը մեր ցեղի հոգեկան կենտրոնացման ընդունակութեան շնորհիւ, կարճ ժամանակում, կարող էր դառնալ ժողովրդական հոգեբանութիւն: Այդպէս էլ եղաւ»<sup>19</sup>: Եվ թվում էր, թէ քրիստոնեական ճշմարիտ ոգով դաստիարակված մարդը պետք է պատրաստ լիներ չարին չարությամբ պատաս-

<sup>14</sup> Ըստ՝ Յ.Պ. Պողոսեան, Ներածութիւն հայ հոգեբանութեան, էջ 423:

<sup>15</sup> Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 2, էջ 185:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 191:

<sup>17</sup> Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 60:

<sup>18</sup> Հ. Ասատրեան, Հատընտիր, Եր., 2004, էջ 186:

<sup>19</sup> Հ. Ասատրեան, Հատընտիր, Եր., 2004, էջ 69:

խանելու, ինչպես ուսուցանում էր Լեոնան Քարոզը. «Աչքի փոխարէն՝ աչք եւ ատամի փոխարէն՝ ատամ»: Մինչդեռ Հայր ճիշտ չընկալեց քրիստոնեությունը և Հին կտակարանի ճշմարտությունները չուրացրած՝ որդեգրեց Նոր կտակարանի «չարին հակառակ չկանգնելու», «թշնամուն սիրելու», կարեկցության և հանդուրժողության պատվիրանները. «Իսկ ես ձեզ ասում եմ. չարին հակառակ մի՛ կանգնիր. այլ եթէ մէկը կամենայ քեզ բռնադատել եւ քո շապիկն առնել, նրան քո բաճկոնն էլ թող» (Մատթեոսի, 5; 39-40): Եվ մենք մեր հետքրիստոնեական պատմության շրջանում ոչ միայն մեր «շապիկն ու բաճկոնը» թողեցինք մեզ «բռնադատողին», այլև մեր Տունն ու Հայրենիքը և այսօր էլ կանգնած ենք մեր պատմական հայրենիքից պահպանված 1/10-ի կորուստյան սպառնալիքի առաջ... Հայ-թուրք հակասությունն այսօր էլ լուծված չէ: Թրքությունը «երկաթե օղակ» է քաշել Հայաստանի Հանրապետության շուրջ, բնականաբար, ինչքան էլ որ ցանկանանք խուսափել հնարավոր առճակատումից և խաղաղասիրության երդումներ տանք, հրաժարվելով նույնիսկ Հայ դատից, պահանջատիրությունից, ցեղասպանության ճանաչումից, միևնույն է, Թուրքիան ունի իր խնդիրները, որոնց իրագործման ճանապարհին կանգնած են Հայաստանի Հանրապետությունն ու հայ ժողովուրդը, հետևաբար՝ «մեր ժողովուրդին վիճակված է մի օր կենաց ու մահու կռիւ մղելու համարյալ երկրների՝ մեր վրայով իրար միանալու ձգտման հետ»<sup>20</sup>, - գրում է Գ. Նժդեհը: Թշնամին այսօր հսկում է ոչ միայն «գերեզմանացած» Արևմտա-հայաստանի, այլև Հայաստանի Հանրապետության խաղաղությունը, որն ամեն բոլոր կարող է խանգարվել (ու թե մինչ այս պահը դա չի իրագործվել, նշանակում է՝ պահը նպաստավոր չի համարվել):

Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ Թուրքիան և թրքությունը չեն հրաժարվել «համաթուրանականության» իրենց ծրագրից, և դրանով է պայմանավորված, որ

այդ օրերին նրանք զգուշորեն շոշափում էին համաշխարհային հանրույթի և գերտերությունների զգոնությունը... Անսպասելի էր: Իհարկե, ո՛չ: Դա ընդամենը մեկ անգամ ևս մեզ հուշում է, որ հնարավոր առճակատումը, վաղ թե ուշ, լինելու է, հետևաբար՝ հարկավոր է պատրաստվել ոչ միայն տեխնիկապես, դիվանագիտորեն, այլև հոգեբանորեն, և անհրաժեշտության դեպքում, ինչպես նկատում է Շահան Նաթալին, պետք է կովել «մեր ակռաներով անգամ», եթե ուզում ենք ապրել որպես մարդ<sup>21</sup>:

Մինչդեռ մենք, որ Ավետիս Ահարոնյանի տիպով բնութագրմամբ՝ «Ազգ էինք մանուկ հաւատով դէպի յախտեանկան արեւը»<sup>22</sup> (ցավոք, այդպիսին ենք մնացել ցայսօր), և մեր գոյության ավելի քան հինգ հազար տարիների ընթացքում ամենից շատ մերժել ենք պատերազմներն ու բռնությունը, լուծ չենք դրել ուրիշների վզին և չենք հանդուրժել լուծը բռնակալների, կյանքից առավել սիրելով ազատությունը, ապրեցինք ևս մեկ պատերազմ և ... պարտվեցինք: Քաղաքական, սոցիալական և տնտեսական ցնցումներից բացի, այս պարտությունը կարող է ունենալ նաև հոգևոր բարոյական կործանարար ազդեցություն, որն իր ամբողջ ընդգրկումով ու խորությամբ այսօր նույնիսկ ուրվագծել հնարավոր չէ: «Գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած և մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան հետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսևորումների ձևով: Աղետի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում. լքում է իր պատմական առաքելությունը, կրավորաբար եւ հնազանդորեն համակերպվում իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից

<sup>20</sup> Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 35:

<sup>21</sup> Շ. Նաթալի, Թուրքերը և մենք, էջ 194:

<sup>22</sup> Ահարոնեան Ա. Հայրենիքիս համար, Պոսթըն, 1920, էջ 13:

անստեղծագործ: Հոգեպես նա դառնում է անիշխան, ժխտելով ամեն մի արժեք, հեղինակություն, իշխանություն, դառնում է զգվելի անձնապաշտ, փոքրոգի ու խորթ հասարակությանը և սկսում հետապնդել սոսկ մեկ առօրեական նպատակ – իր սեփական հացն ու հանգիստը», - գրում է Գարեգին Նժդեհը<sup>23</sup>:

Դժվարությամբ, սակայն, ուզում եմ հավատալ, որ մեր քրտնաջան աշխատանքի և բարեկամ երկրների ու ժողովուրդների աջակցությամբ որոշ ժամանակ անց կկարողանանք կարգավորել տնտեսությունը, քաղաքական հարաբերությունները՝ կյանքը վերադարձնելով իր բնականոն ընթացքին: Բայց կկարողանանք, արդյոք, հաղթահարել հայ մարդու ապրած հոգևոր-բարոյական աղետի հետևանքները, կկարողանանք առանց ամոթի զգացումի, առանց ատելության ու մեղադրանքի՝ նայել իրար, մեր երեխաների ու մայրերի աչքերի մեջ... Կկարողանանք, արդյոք, նե-

րել ինքներս մեզ՝ մեր քաղաքական ընտրության համար...

Հոդվածս ամփոփեմ XX դարի մեծագույն քաղաքագետ և ռազմագետ Ուինսթոն Չերչիլի նշանավոր դարձած մեկ արտահայտությամբ: Բայց մինչ այդ՝ նախապատմությունը: Կյանքի վերջին տարիներին անգլիական մի համալսարան Չերչիլին հրավիրեց դասախոսություն կարդալու: Անգլիայի տարբեր շրջաններից բազմաթիվ մարդիկ եկել էին ներկա գտնվելու այդ մեծ իրադարձությանը, տեսնելու և լսելու իրենց ամենամեծ հայրենակցին: Չերչիլն այդ օրն արտասանեց իր ամբողջ կյանքի կենսափորձով խտացված ամենանշանավոր իմաստասիրական խոսքը: Դանդաղորեն մոտենալով բարձրախոսին՝ նա ասաց. «Երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք մի հանձնվեք», ապա դարձյալ նստեց: Այն, ինչ ասվելու էր, ասվեց. «Երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք մի հանձնվեք»...

<sup>23</sup> Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 312:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ղ. Ալիշան, Երկեր, Եր., 1981:
2. Ա. Ահարոնեան, Հայրենիքիս համար, Պոսթըն, 1920:
3. Հ. Ասատրեան, Հատընտիր, Եր., 2004:
4. Մ.Ս. Գաբրիելեան, Հայ ցեղը, Նիւ-Ետորք, 1911:
5. Շ. Նաթալի, Թուրքերը եւ մենք, Եր., 2011:
6. Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., «Հայաստան» հրատ., 2001:
7. Հ. Պողոսեան, Ներածութիւն Հայ հոգեբանութեան, Գահիրե, 1958:
8. Մ. Վարանդեան, Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 1, Ժնև, 1912:
9. Վարանդեան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. 2, Ժնև, 1913:
10. Дынник М.А., Диалектика Гераклита, М., 1929.
11. Поппер, К., Открытое общество и его враги, т. 2, М.: Феникс, Международный фонд "КУЛЬТУРНАЯ ИНИЦИАТИВА", 1992.- 448 с.
12. Философский энциклопедический словарь / Ред.-сост. Е.Ф. Губский и др., М.: Инфра М, 2003. 576 с.

**Юрий ОВАКАНЯН***И.о. зав. кафедрой философии и армянской истории, АГЭУ,  
к.ф.н., доцент*

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

**ПРОЖИЛИ ЕЩЕ ОДНУ ВОЙНУ...**

Война - это социальная катастрофа, причина несчастий и страданий. Однако война - это также социальная реальность, избежать которую практически невозможно, поскольку она обусловлена различными обстоятельствами: политическими, экономическими, социальными, культурными и т. д. Война - это инструмент политики, еще один способ ее проявления. Война особенно катастрофична для проигравшей стороны, потому что, помимо политических, социальных и экономических потрясений, она также может иметь морально-нравственное деструктивное влияние. Народы, подвергшиеся большим бедствиям и потрясениям, особенно малые страны, морально регрессируют. Будучи истощенными духовно, они свыкаются с потерей, оставляя свою историческую миссию, приспособляются к навязанной политической судьбе, становятся пассивными политически и творчески, невыносимо эгоистичными, мелочными, чуждыми обществу и начинают преследовать единственную обыденную цель - питание и отдых ...

Автор убежден, что рано или поздно, проделав тяжёлый труд, при поддержке дружественных стран и народов, мы сможем стабилизировать экономику, политические отношения, жизнь вернется в привычное русло..., однако труднее всего будет преодолеть последствия испытанной армянским народом духовно-нравственной катастрофы... Но мы должны это сделать, мы обязаны преодолеть себя и «никогда, никогда не сдаваться»...

**Ключевые слова:** *государство, нация, политика, война, мир, духовно-нравственная катастрофа*

**Yuri Hovakanyan***Acting Head of the Chair of Philosophy and Armenian History, ASUE,  
PhD in Philosophy, Associate Professor*

VISION OF ARMENIAN SOCIETY

**WE HAVE SURVIVED ANOTHER WAR...**

War is a social catastrophe, a cause of misfortunes and sufferings. However, war is also a social reality, which is almost impossible to avoid, because it is conditioned by various circumstances: political, economic, social, cultural, etc. War is the tool of politics, its continuation by other means.

War is especially catastrophic for the losing side, as besides political, social and economic shocks, it can also have a destructive spiritual-moral impact. A nation who has been subjected to great disasters and shocks, especially small nations, begin to suffer mental regression. Being spiritually exhausted, it considers everything lost, leaves its historical mission, adapts to the forced political destiny, becomes politically pessimistic, culturally uncreative, disgustingly selfish, biased and ignorant to the society. The nation starts to follow one and only daily goal: daily meal and rest...

The author is convinced that sooner or later with the nation's hard work and with the support of friendly countries and peoples, we will be able to stabilize the economy, political relations, return life to its daily routine . However, the most difficult thing is to overcome the consequences of the spiritual-moral catastrophe.

We must overcome these consequence, we must overcome ourselves and "never, never give up."

**Keywords:** *state, nation, politics, war, peace, spiritual-moral catastrophe*